



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 07.05.2020

թվականի թիվ 20-05-06-01 որոշմամբ

Ռեկտոր Ա.Ա.Սուրադյան

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառություն ստացած 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ առցանց ատեստավորման ժամանակավոր կանոնները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանը, Համալսարանի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր: Սույն կանոնակարգով սահմանվում են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման առանձնահատկություններ, հիմք ընդունելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշումը,

Հայաստանի Հանրապետության Պարետի 03.05.2020 թվականի թիվ 63 որոշումը և արտակարգ դրության հետ կապված այլ իրավական ակտեր:

3. Ամփոփիչ ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիքների ստուգումն է:

## 2. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՐ

4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը (նախագահ, տեղակալ և անդամներ) կազմավորվում է ըստ որակավորման մակարդակների, յուրաքանչյուր մասնագիտության կամ կրթական ծրագրի գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) Համալսարանի կամ գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական հաստատությունների գիտական աստիճան և (կամ) կոչում ունեցող մասնագետներից:

6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչները, համապատասխան ֆակուլտետի ղեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով Համալսարանի աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նախագահի պարտականություններն իրականացնում է նախագահի տեղակալը:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Համալսարանի մեթոդական ուղեցույցներով:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը տվյալ մասնագիտության կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

2) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

3) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

11. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ռեկտորը և ամփոփիչ քննությունների ու մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

12. Ռազմաբժշկական ֆակուլտետի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման «Ռազմական բժշկություն» առարկայի քննական հանձնաժողովի կազմը հաստատվում է ՀՀ Պաշտպանության նախարարի և ռեկտորի համատեղ հրամանով:

### **3. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

13. Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով ուսուցումը, կուտակել են համապատասխան կրեդիտներ և Համալսարանի հանդեպ ֆինանսական պարտավորություններ չունեն: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է ֆակուլտետի դեկանի կարգադրությամբ:

14. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նախագահի տեղակալի ներկայությունը պարտադիր է: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է ռեկտորի հրամանով:

15. Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է առցանց, մեկ փուլով հետևյալ կարգով.

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետի «Բուժական գործ» մասնագիտությամբ «Բժշկի» որակավորում շնորհելու համար անցկացվում է մեկ բանավոր քննություն՝ «Վիրաբուժական

հիվանդություններ», «Ներքին հիվանդություններ» և «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկաներից:

2) Ռազմաբժշկական ֆակուլտետի «Բուժական գործ զինված ուժերում» մասնագիտությամբ «Բժշկի» որակավորում շնորհելու համար անցկացվում են 2 բանավոր քննություն՝ մեկը «Վիրաբուժական հիվանդություններ» և «Ներքին հիվանդություններ» առարկաներից, մյուսը՝ «Ռազմական բժշկություն» (ռազմադաշտային վիրաբուժություն, ռազմադաշտային թերապիա, անձնակազմի բժշկական ապահովման կազմակերպում (ԱԲԱԿ), բժշկական ծառայության կազմակերպում և մարտավարություն (ԲԾԿՄ) առարկայից:

3) Ստոմատոլոգիական ֆակուլտետի «Ստոմատոլոգիա» մասնագիտությամբ «Բժիշկ ստոմատոլոգ» որակավորում շնորհելու համար անցկացվում է մեկ բանավոր քննություն՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա», «Վիրաբուժական ստոմատոլոգիա» և «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» առարկաներից:

4) Դեղագիտական ֆակուլտետի՝

ա. «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի բակալավրի» որակավորում շնորհելու համար, անցկացվում է մեկ բանավոր քննություն «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա», «Դեղագործական քիմիա» առարկաներից,

բ. «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի մագիստրոսի» որակավորում շնորհելու համար՝ անցկացվում է մեկ բանավոր քննություն «Դեղագործական քիմիա», «Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա» առարկաներից:

5) Հանրային առողջության ֆակուլտետի «Բիզնես վարչարարություն» մագիստրոսի որակավորում շնորհելու համար կազմակերպվում է «Բուժհաստատությունների կառավարում» կրթական ծրագրով մագիստրոսական թեզի առցանց պաշտպանություն:

16. Առցանց բանավոր քննությունն անցկացվում է համաձայն հետևյալ պահանջների՝

1) Ընդհանուր բժշկության ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորման քննական տոմսը ներառում է 6 հարց՝ 2 հարց «Ներքին հիվանդություններ», 2 հարց «Վիրաբուժական հիվանդություններ» և 2 հարց «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» առարկաներից: Ուսանողը պատասխանելու համար ընտրում է յուրաքանչյուր առարկայից մեկ հարց, ընդհանուր առմամբ պատասխանելով երեք հարցի:

2) Ռազմաբժշկական ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման քննական տոմսը «Ներքին հիվանդություններ» և «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաներից ներառում է 4 հարց՝ 2 հարց «Ներքին հիվանդություններ» և 2 հարց «Վիրաբուժական հիվանդություններ» առարկաներից: Ուսանողը պատասխանելու համար ընտրում է յուրաքանչյուր առարկայից մեկ հարց, ընդհանուր առմամբ պատասխանելով երկու հարցի: «Ռազմական բժշկություն» առարկայի քննական տոմսը ներառում է 6 հարց՝ «Ռազմադաշտային վիրաբուժություն»՝ 2 հարց, «Ռազմադաշտային թերապիա»՝ 2 հարց և «ԲԾԿՄ» և/կամ «ԱԲԱԿ»՝ 2 հարց: Ուսանողը պատասխանելու համար ընտրում է յուրաքանչյուր առարկայից մեկ հարց, ընդհանուր առմամբ պատասխանելով երեք հարցի:

3) Ստոմատոլոգիական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորման քննական տոմսը ներառում է 6 հարց՝ «Թերապևտիկ ստոմատոլոգիա» առարկայից 2 հարց, «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա» առարկայից 2 հարց և «Վիրաբուժական ստոմատոլոգիա» առարկայից 2 հարց: Ուսանողը պատասխանելու համար ընտրում է յուրաքանչյուր առարկայից մեկ հարց, ընդհանուր առմամբ պատասխանելով երեք հարցի:

4) Դեղագիտական ֆակուլտետում ամփոփիչ ատեստավորման քննական տոմսը ներառում է 6 հարց՝ «Դեղագործական տեխնոլոգիա» առարկայից 2 հարց, «Դեղագործական քիմիա» առարկայից 2 հարց և «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա» առարկայից 2 հարց: Ուսանողը պատասխանելու համար ընտրում է յուրաքանչյուր առարկայից մեկ հարց, ընդհանուր առմամբ պատասխանելով երեք հարցի:

### **17. Առցանց բանավոր քննությունը անց է կացվում համաձայն հետևյալ պահանջների.**

1) ուսանողը քննական տոմսը ընտրում է իրեն առաջարկված քննական տոմսերի համարներից:

2) քննական տոմսը ուսանողին փոխանցվում է «ԶՈԻՄ» առցանց ինտերնետային ծրագրի (այսուհետ՝ ZOOM) հարթակի միջոցով:

3) շրջանավարտը իրավունք ունի քննական տոմս ընտրել մեկ անգամ: Տոմսը չի թույլատրվում փոխել:

4) հանձնաժողովների լրացուցիչ կամ ուղղորդող հարցերը պետք է լինեն տոմսում ընդգրկված և ուսանողի կողմից ընտրված հարցերի շրջանակներում :

5) Խմբի բոլոր ուսանողները նախատեսված ժամին միանում են հանձնաժողովի ZOOM կոնֆերանսին՝ նախապես տրամադրված ZOOM ID-ներով և գաղտնաբառով, քննությունը

հանձնում են ըստ դեկանատային ցուցակներում ուսանողների հերթական համարների: Տոմսի հարցերին նախապատրաստվելու համար ուսանողներին տրվում է 20 րոպե ժամանակ:

Խմբի քննությունը մեկնարկելիս քննության իրենց հերթին սպասող ուսանողները ուղարկում են քննությանը միանալու հայտ և սպասում են ZOOM սպասման գոտում (waiting room), իրենց հերթը հասնելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը ընդունում է տվյալ ուսանողի հայտը (admit) և միացնում ծրագրին, և սկսվում է ուսանողի քննական գործընթացը: Հերթը հասնելու պահին, եթե ուսանողը ներկա չի գտնվում ZOOM ծրագրի սպասման գոտում, և ծրագրին միանալու հայտ չի ներկայացնում առաջիկա 30 րոպեների ընթացքում (բայց ոչ ավել, քան մինչև տվյալ խմբի քննության ավարտը), հանձնաժողովը իրավասու է համարել, որ այդ ուսանողը չի ներկայացել քննությանը:

6) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

**18. Ուսանողը ամփոփիչ առցանց ատեստավորմանը մասնակցելու համար պարտավոր է՝**

1) ունենալ ZOOM ծրագրով ներբեռնված համակարգիչ, անխափան և որակյալ ինտերնետային կապ, ինչպես նաև ZOOM ծրագրով ներբեռնված և առնվազն 3G հեռախոսային ինտերնետային կապով օժտված հեռախոս սմարթֆոն, որը կապահովի տեսակապի անընդհատությունը և միաժամանակ կծառայի որպես երկրորդ տեսախցիկ: Քննությանը ուսանողը պետք է միանա միաժամանակ 2 սարքերով (համակարգիչ և հեռախոս), իր անուն ազգանունով:

2) սենյակում լինել միայնակ,

3) չունենալ ձեռքի ժամացույց կամ այլ տեխնիկական միջոց,

4) պատասխանի ընթացքում կիսվի իր համակարգչի էկրանով (screen share),

5) նստել համակարգչից այնպիսի հեռավորության վրա, որ քննության ողջ ընթացքում համակարգչի տեսախցիկով տեսանելի լինի սեղանի մակերեսը, ուսանողի դեմքը, ձեռքերը: Երկար մազերը պետք է լինեն հավաքված: Երկրորդ սարքի (հեռախոսի) տեսախցիկը պետք է տեղադրվի համակարգչի էկրանին հակադիր դիրքով այնպես, որ տեսադաշտում երևա համակարգչի էկրանը, ուսանողի մեջքային մակերեսը ամբողջությամբ և սենյակի առավելագույն մակերեսը,

6) տոմսը կարդալուց հետո քննության ընթացքում չօգտվել համակարգչից և այլ սարքավորումներից,

7) քննության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվությունը,

8) ուսանողը պարտավոր է տեսանելի ձևով ցուցադրել իր անձնագիրը և ստուգարքային գրքույկը:

19. Սույն կետով սահմանված պայմաններից առնվազն մեկի խախտման դեպքում ուսանողի քննությունը դադարեցվում է, ուսանողը համարվում է չատեստավորված, անկախ նախօրոք տրված պատասխանի բովանդակությունից և ծավալից:

20. Քննության ամբողջ ընթացքը տեսաձայնագրվում է:

21. Ամփոփիչ ատեստավորման առարկայական քննության հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները՝ տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքերի հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան: Դրանք հաստատվում են ֆակուլտետների ուսումնագիտական խորհուրդներում և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին են տրամադրվում ամփոփիչ ատեստավորումից առնվազն 3 ամիս առաջ:

22. Ելնելով ամփոփիչ ատեստավորման կազմակերպման առցանց ձևաչափից, նախկին եռափուլ ձևաչափից միափուլ՝ մեկ բանավորի (նախկին 3-ի փոխարեն) անցման իրողությունից և ժամանակային խիստ սահմանափակումից, ուսանողներին 3 ամիս առաջ տրված քննական առարկայական ծրագրերի հարցաշարերը կվերաձևակերպվի, հիմքում դնելով առարկաների վերջնարդյունքների ատեստավորման տրամաբանական փոփոխությունը:

23. Հանրային առողջության ֆակուլտետում մագիստրոսական թեզի առցանց պաշտպանությունը կազմակերպվում է հետևյալ կանոններով.

1) Նախատեսված ժամին խմբի բոլոր ուսանողները միանում են հանձնաժողովի «ZOOM» առցանց ինտերնետային ծրագրին՝ նախապես տրամադրված ZOOM ID-ներով և գաղտնաբառով և սպասում են ZOOM սպասման գոտում (waiting room): Ուսանողները մագիստրոսական թեզերը ներկայացնում են ըստ դեկանատային ցուցակներում ուսանողների հերթական համարների: Ուսանողի հերթը հասնելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը ընդունում է տվյալ ուսանողի հայտը (admit) և միացնում ծրագրին, և սկսվում է ուսանողի ատեստավորման գործընթացը: Հերթը հասնելու պահին եթե ուսանողը ներկա չի

գտնվում ZOOM ծրագրի սպասման գոտում, և ծրագրին միանալու հայտ չի ներկայացնում առաջիկա 30 րոպեների ընթացքում (բայց ոչ ավել, քան մինչև տվյալ խմբի ատեստավորման ավարտը), հանձնաժողովը իրավասու է համարել, որ այդ ուսանողը չի ներկայացել ատեստավորմանը,

2) մագիստրոսական թեզի բովանդակությունը բանավոր ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է 20 րոպե նախապատրաստվելու ժամանակ: Պատասխանի ընթացքում շրջանավարտը պետք է կիսվի իր համակարգչի էկրանով (screen share), ներկայացնելով սահիկաշարը (սլայդներ),

3) թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներին հատկացվում է մինչև 20 րոպե՝ շրջանավարտին հարցեր տալու և պատասխաններ ստանալու համար,

4) գնահատականը ձևավորվում է հանձնաժողովի բոլոր անդամների գնահատականի միջին թվաբանականից: Արդյունքում ստացվող նիշն ամբողջացվում է,

5) քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

**24. Ուսանողի գիտելիքը գնահատվում է** ըստ քննական առարկաների: Վերոհիշյալ առարկաներից յուրաքանչյուրից ուսանողը ստանում է մեկ գնահատական, որը ձևավորվում է տվյալ առարկայի հանձնաժողովի մասնագետ անդամների, հանձնաժողովի նախագահի և փոխնախագահի գնահատականների միջինացման արդյունքում: Որևէ առարկայից միջինացման արդյունքում անբավարար գնահատական ստանալու դեպքում տվյալ ուսանողը համարվում է միայն այդ առարկայից <<անբավարար>> ստացած:

25. Դեղագիտական ֆակուլտետի շրջանավարտին «Ֆարմացիա» մասնագիտությամբ «Ֆարմացիայի բակալավրի» որակավորում շնորհելու համար անց կացվող ամփոփիչ ատեստավորման վերջնական գնահատականը որոշվում է 3 առարկաների («Դեղագործական տեխնոլոգիա», «Դեղագործության կառավարում և էկոնոմիկա», «Դեղագործական քիմիա») գնահատականների միջինացմամբ:

26. Քննությունը ձախողած (չատեստավորված) ուսանողը հաջորդ տարիներին քննությունը կարող է վերահանձնել առկա բանավոր կարգով, եթե առկա չեն համաճարակային վիճակով պայմանավորված սահմանափակումներ:

27. Ամփոփիչ ատեստավորման և մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»



գնահատականներով՝ ըստ Համալսարանում ընդունված գնահատման 10 բալանոց սանդղակի: Գնահատականները հայտարարվում են նույն օրը՝ տվյալ խմբի քննության վերջում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո, հանձնաժողովի նախագահի կողմից՝ ողջ խմբի ներկայությամբ:

28. Հիմք ընդունելով սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան ամփոփիչ քննության և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանության դրական (բավարար, լավ, գերազանց) արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում՝ շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին:

29. Բացասական (անբավարար) արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

30. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 տոկոսը: ՄՈԳ-ի հաշվարկն իրականացվում է ուսումնառության սկզբից մինչև ավարտական կուրսի առաջին կիսամյակը ներառյալ: Վերջին կիսամյակի արդյունքները ՄՈԳ-ում չեն հաշվարկվում:

31. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումներն ընդունվում են հանձնաժողովի փակ նիստում:

32. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետով: Արձանագրության մեջ նշվում են ամփոփիչ քննությունների և (կամ) մագիստրոսական թեզերի գնահատականները, տրված հարցերը, հատուկ կարծիքները, շնորհված որակավորումը, աստիճանը, Համալսարանն ավարտողի դիպլոմի տեսակը և արձանագրության օրինակելի ձևում նախատեսված այլ տեղեկատվություն:

33. Ռեկտորի և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ հաստատված դիպլոմը շրջանավարտին տրամադրվում է համապատասխան ֆակուլտետի դեկանի կամ դեկանի տեղակալի կողմից քննաշրջանի վերջին օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում:

#### 4. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

##### ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

34. Ամփոփիչ ատեստավորման գնահատականը (անբավարար, բավարար, լավ, գերազանց) կարող է Համալսարանում բողոքարկվել առցանց և լրացուցիչ քննարկվել համաձայն հետևյալ ընթացակարգային պահանջների՝

1) շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ պարզաբանումներ գնահատականի վերաբերյալ.

2) գնահատականի վերաբերյալ շրջանավարտի բողոքն ընդունվում և դիտարկվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում.

3) շրջանավարտը ամփոփիչ ատեստավորման կամ մագիստրոսական թեզի գնահատականի բողոքարկման վերաբերյալ հանձնաժողովի նախագահին դիմում է ամփոփիչ ատեստավորման արդյունքները հրապարակելուց անմիջապես հետո: Բողոքարկման հանձնաժողովի նախագահը քննարկումը կազմակերպում է նույն օրը՝ տվյալ օրվա քննությունները ավարտելուց անմիջապես հետո:

35. Բողոքարկման հանձնաժողովը նախապես կազմավորվում է ռեկտորի հրամանով, որի կազմում մտնում են՝

1) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, որպես նախագահ,

2) քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող ուսումնամեթոդական վարչության աշխատողը,

3) Համալսարանի ուսանողական խորհրդարանի ներկայացուցիչը,

4) հանձնաժողովի նախագահի կողմից ներգրավված, քննական հանձնաժողովի անդամ չհանդիսացող Համալսարանի ամբիոններից նեղ մասնագետներ:

36. Բողոքարկման հանձնաժողովի նախագահը կարող է բողոքարկման նիստերին հրավիրել քննական հանձնաժողովի անդամներին, քարտուղարներին, ինչպես նաև համապատասխան ամբիոնների մասնագետներին և Համալսարանի իրավաբանական բաժնի ներկայացուցչին:

37. Բողոքարկման հանձնաժողովը՝ բողոքարկող շրջանավարտի առցանց ներկայությամբ դիտում է տեսաձայնագրությունը, քննարկում և բաց քվեարկությամբ,

հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) գնահատականը թողնել անփոփոխ կամ
- 2) գնահատականը բարձրացնել:

38. Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները: Որոշմանը համաձայն չլինելու դեպքում բողոքարկման հանձնաժողովի անդամը ներկայացնում է գրավոր հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

#### **4. ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ(ՆԵՐ)Ը ՁԱԽՈՂԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ**

39. Նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորման քննություն(ներ)ը ձախողած ուսանողները հանձնում են անբավարար ստացած առարկան(ներ)ը մեկ փուլով՝ առցանց, բանավոր: Բոլոր առարկաները հանձնում են առանձին քննությունների ձևով, տարբեր օրերին, իրենց ավարտած տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների տոմսերով և հարցաշարերով:

40. Այն ուսանողները, ովքեր նախորդ տարիներին հաջողությամբ հանձնել են եռափուլ քննության առաջին երկու փուլերը (գործնական հմտությունները և համակարգչային թեստային քննությունը), նրանց վերջնական գահատական(ներ)ը ձևավորվում է համապատասխան ավարտական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների նույն բազմաբաղադրիչ կարգով: Նրանք, ովքեր առաջին երկու փուլերը ձախողել էին կամ հանձնել միայն գործնական հմտությունների փուլը, վերջնական քննական գնահատականը ձևավորվում է միայն առցանց բանավոր քննության տվյալներով՝ յուրաքանչյուր առարկայի համար առանձին գնահատականով:

41. Այն ուսանողների համար, ովքեր կրկին կձախողեն ամփոփիչ ատեստավորման քննությունը որևէ առարկայից (առարկաներից), հաջորդ տարի համաճարակով պայմանավորված սահմանափակումների բացակայության դեպքում հերթական վերահանձնումը կկազմակերպվի իրենց ավարտական տարվա ամփոփիչ ատեստավորման կարգի համաձայն (եռափուլ), հաշվի առնելով նախկինում ստացած գնահատականները գործնական հմտությունների և/կամ համակարգչային թեստային քննության փուլերից:

42. Նախորդ տարիներին ամփոփիչ ատեստավորումը ձախողած ուսանողների համար ամփոփիչ ատեստավորման ընթացակարգը, ինչպես նաև քննության արդյունքի բողոքարկման կանոնները սահմանվում են սույն կանոնակարգով:

## 5. ԵԶՐԱՓՈՒՄ ԴՐՈՒՅԹՆԵՐ

43. Ամփոփիչ ատեստավորման ժամանակ «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած և (կամ) մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված և «անբավարար» գնահատական ստացած կամ չներկայացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնում և (կամ) նոր պաշտպանություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ Համալսարանի կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

44. Շրջանավարտն ամփոփիչ ատեստավորման վերահանձնում է միայն այն առարկայից, որից ստացել է «անբավարար» գնահատական, չի ներկայացել քննությանը կամ թեզի պաշտպանությանը:

45. Մագիստրոսական թեզը վերահանձնելու ժամանակ շրջանավարտը համապատասխան ֆակուլտետից ստանում է թեզի նոր թեմա և նշանակվում է նոր դեկավար:

46. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է ռեկտորին և քննարկվում է համապատասխան ֆակուլտետի ուսումնագիտական խորհրդում: Ամփոփիչ ատեստավորումից հետո Համալսարանը ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

47. Ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին 5 աշխատանքային օրվա ընթացքում անվճար տրվում է ակադեմիական տեղեկանք, Համալսարանի ռեկտորին՝ շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից դիմում ներկայացնելուց հետո:

48. Ամփոփիչ ատեստավորման ամբողջ ընթացքի տեսաձայնագրությունը Համալսարանում պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո առնվազն 6 ամիս:

49. Ռազմաբժշկական ֆակուլտետից հեռացված շրջանավարտները չեն կարող վերականգնվել նույն ֆակուլտետում:

50. Առցանց ատեստավորման ժամանակ սույն կանոնակարգով չնախատեսված և արտառոց հարցեր առաջանալու դեպքերում Համալսարանի Մանդատային հանձնաժողովը

լիազորվում է հրավիրելու արտահերթ նիստ(եր) 1 ժամվա ընթացքում և կայացնելու հրավիճակից բխող և սույն կանոնակարգով սահմանված օբյեկտիվությունն ապահովող որոշումներ: *(Լրացում՝ 23.05.2020, թիվ 20-05-07-04)*

\* \* \*